

ճաշարանին մէջ (Մտթ. Բ, 69), բնակա-
նապէս սեպհականք հայ սեղանին, որոց
առաջինք կը թուին ազնիւ սփռոցներ (տա-
պաստ արկանելիք) բազմականին վրայ
ձգուած, նման հոովմէական ճոխ պաստա-
ռաց՝ որ նոյն պաշտօնը կը վարէին (Դար.
Ս, 1280), եւ որոց կը պատահինք Գ
դարուն կապագովկիոյ մէջ եւս. «վերար-
կուք երեւելիք ոսկեթեւք» (Նիւս. Հյր. ԺԲ):
Իսկ տապաստակաց վրայ կը դրուէին
«բարձերը»:

Փաւստոս՝ խոնարհամիտ Ս. Ներսեսի
բազմոցին պարզութիւնը ցոյց տալ կ'ու-
զէ, երբ կ'ըսէ՝ թէ աղքատներն «ընդ նմա
եւ ի նորա ակըմբի դարմանէին բազմեալք»
(77): «Ակումբ» Ս. Գրոց մէջ մորթի
հետ ալ գործածուած է թարգմանչէն, «գա-
կումբն մաշկեայ՝» փոխան բնագրին միակ
«մաշկ» բառին (Յղթ. ԺԲ, 15). եւ կար-
ծել կու տայ՝ թէ Փաւստոսի օրինակին
մէջ ալ հոմանիշ է տապաստակին, բայց
աւելի անշուք. եւ նման բարձին՝ փո-
խարբերաբար կը նշանակէ հոն բազմոցն
ինքնին կամ բազմոցն ալ միասին:

Շատ բնական է՝ որ նաեւ ուսմիկը, որ
գետնի վրայ նստած կը ճաշէր (աստ, 50),
իւր ներքեւ ունենար նոյնպէս տոհմային
պարզունակ ակումբը, որով բարձն ու տա-